

բու մէջ (43): — Խոհակերք¹ կամ Խորտկարարք², որոնք Ս. Գրոց մէջ հոմանշարար կը թարգմանեն մի եւ նոյն յն. բառը, եւ կը կոչուին նաեւ Խոհանոքք կամ ամորարարք³, պաշտօն ունենալով «զհամադամս խորտկացն պատրաստել»⁴, ինչպէս եւ ամսաբերք⁵, ծաղարարք⁶, գուցէ եւ պրակուներագործք⁷, որոնք իրենց շինած ուտեստներէն նաեւ իրենց կոչումը կ'առնուն, զբաղած են խոհանոցին մէջ՝ կրակարանին ու թոնդրուքին (32, 34) վրայ գետեղուած կաթսայից, սաներու, պոյտերու, կճիճներու (37-40), կասկարայից (36), տապակաց ու շամփրներու շուրջ (41), որոնք ծածկուած են հեշտաբոյր ճենճերով ու գոլորշով. եւ ըստ պիտոյից՝ ունելիք, ակիշ, շերեփ կամ մսահանի ձեռին (35-6, 40), կը զործեն անդադար: Մէկ կողմ մաղը կը շարժի տաշտին վրայ (41, 45). միւս կողմ սանդը կը դրնգէ իւր տոռին հարուածոց ներքեւ (42): — Շտեմարանայետր⁸ կամ շտեմարանայաւ-

1. Ա. Թագ. Թ, 23. Ոսկ. Մաթ. Բ, 69. Թղթ. Ա, 532, 601, 816: — 2. Յճ/ս. 40. Ա. Թագ. Ը, 13: — 3. Փիւլ. ճաբ. 15, 20: — 4. Տար. Վերլծ: — 5. Ոսկ. Մաթ. Բ, 69. Թղթ. Ա, 532: — 6. Ոսկ. Մաթ. Բ, 69. Թղթ. Ա, 601, ուր յն. բնագիրը չունի: — 7. Ոսկ. Մաթ. Բ, 69. առաջին արմատով ու կազմութեամբ նոյն է յունարենի հետ: — 8. Հյպատ. 147. զնզնք. ի Հյկզ: